ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐԸ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐԸ

ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱՋԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ *ՓՐՈՖԷՍՕՐ ՏՕՔԹՈՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՆԻՍԱՃԵԱՆԻՆ* ՈՐ Ի ՍԱՆ ՓԱՒԼՕ, Ի ՊՐԱԶԻԼ

Սրտի խոր գոհունակութեամբ տեղեկացանք Պրազիլիոյ Հայոց Թեմի Բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Տաթև Արքեպս. Ղարիպեանէն, Ձեր բազմամեայ բժշկական, գիտական, դասախօսական և ազգային բեղմնալից ծառայութեանց մասին:

Ձեզ անձամբ ալ ճանչնալով՝ քաջատեղեակ ենք այն նուիրաբերութեան ոգիին զոր Ձեր կեանքի ամբողջ տևողութեան անվերապահ և ամբողջական ձևով արտայայտած էք թէ ձեր բժշկագիտական մասնագիտութեան մարզին մէջ, և թէ՝ հայ համայնքային կեանքի մէջ: Ձեր բարձր գիտական և բժշկական հմտութեամբ և գործնական ծառայութեամբ մեծ վարկ շահեցաք Պրազիլիոյ բարձր դասու շրջանակներուն և պարզ ժողովուրդին կողմէ, հաւասարապէս: Հայութեան անունին լոյսի պայծառ շող աւելցուցիք Պրազիլիական հողին վրայ:

Այդ բոլորին զուգահեռ կենդանի և օգտաբեր ընծայեցիք Ձեր մասնակցութիւնը Հայց. Եկեղեցւոյ ազգային-եկեղեցական և հասարակական կեանքին մէջ արժանանալով բոլորի սիրոյն և յարգանքին:

Ի գնահատութիւն Ձեր բազմաբեղուն և երկարամեայ ծառայութեանց այսու Հայրապետական կոնդակս Ձեզի կը շնորհենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարձրագոյն աստիճանի շքանշանը

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած որ Ձեզի շնորհէ երկար կեանք, որպէսզի նորանոր ծառայութիւններ մատուցէք Պրազիլիոյ հայրենիքին և ժողովուրդին, մեր Հայց. Եկեղեցիին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և Պրազիլահայ գաղութին և մեր Մայր Հայրենիքին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 23 Դեկտեմբերի
Ցամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽՋ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/124

ՍԻՐԵՑԵԱԼ ԴՍՏԵՐ ՄԵՐՈՅ ԵՒ ՀԱՐԱՉԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԻԿԻՆ ԳՈՀԱՐ ՏԷՐ ԳԷՈՐԳԵԱՆԻՆ ՈՐ Ի ՄՈՆԹՐԷԱԼ, Ի ԳԱՆԱՏԱ

Մենք հոգեկան ուրախութիւնը ունեցանք տեղեկանալու Գանատայի Հայոց Թեմի Բարեխնամ Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Ցովնան Արքեպս. Տէրտէրեանէն Ձեր երկար տարիներու անձնուէր ծառայութեանց մասին ի սպաս մեր Ս. Եկեղեցւոյ և մեր սիրեցեալ ժողովուրդին:

Անցնող յիսուն տարիներու ընթացքին Դուք սիրոյ և զոհողութեան ազնիւ ոգիով առաջնորդուած՝ թէ Եգիպտոսի և թէ Մոնթրէալի մէջ ամբողջական, անշահախնդիր և անվերապահ մասնակցութիւն բերիք մեր ազգային-եկեղեցական կեանքին և գործունէութեան: Դուք զօրավիգ կանգնեցաք, թէ բարոյապէս և թէ նիւթապէս, Գանատայի մեր Առաջնորդարանին և Հ.Բ.Ը.Մ-ի «Այլեք Մանուկեան» վարժարանին:

Ի գնահատութիւն Ձեր բազմամեայ և բազմօգուտ սպասաւորութեանց՝ այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ շքանշանը:

Կ'աղօթենք առ Աստուած որ Ձեզի պարգևէ կատարեալ առողջութիւն և երկար կեանք, որպէսզի լիովին վայելէք Ձեր Ս. Եկեղեցիին, Ձեր նուիրական Մայր Հայրենիքին և Ձեր ամենասիրելի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վերածննդեան և բարգաւաճման այս նոր շրջանը:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 25 Դեկտեմբերի
Ցամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽՋ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/125

ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱՉԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ *ՏԻԱՐ ԽՈՐԷՆ ՄԷՅԽԱՆԷՃԵԱՆԻՆ* ՈՐ Ի ՆԻՒ ԵՈՐՔ, Ի ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Սրտի խոր ուրախութեամբ տեղեկացանք Ամերիկայի Արևելեան Թեմի Բարեխնամ Առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեանէն, որ այս տարի պիտի նշուի Ձեր ծննդեան 80-ամեակը:

Մենք անձամբ ծանօթ ենք Ձեր երաժշտական տաղանդին և նուիրեալ աշխատանքին ի սպաս հայ երաժշտութեան, յատկապէս հայ սրբազան երաժշտութեան: Տարիներ շարունակ սքանչելիօրէն ղեկավարեցիք Ս. Էջմիածնի Մայր Տաճարի երգչախումբը միշտ հաւատացեալներուն ընծայելով հոգևոր բարձր ապրումի պահեր և մեծ նպաստ բերելով հայ եկեղեցական երաժշտութեան զարգացման և տարածման նուիրական գործին:

Վերջին տարիներուն, նոյն անձնուէր ոգիով կը շարունակէք Ամերիկահայոց Արևելեան Թեմի Ս. Վարդան Մայր Տաճարի դպրաց դասի ղեկավարութիւնը, կը կազմակերպէք փառաւոր համերգներ միացեալ երգչախումբերով և կը քաջալերէք երիտասարդութեան կապուածութիւնը իր մայրենի Ս. Եկեղեցիին:

Ի գնահատութիւն Ձեր երկար տարիներու բազմօգուտ և արդիւնաշատ գործունէութեան, այսու Հայրապետական կոնդակս Ձեզի կը շնորհենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

Ս·ՍԱՀԱԿ-Ս·ՄԵՍՐՈՊ շքանշանը:

Կ'աղօթենք առ Ամենաբարին Աստուած, որ Ձեզի պարգևէ քաջառողջութիւն, որպէսզի "Ընդերկայն ատուրս" Ձեր տաղանդն ու հմտութիւնը նոյն սիրով և զոհողութեամբ շարունակէք ընծայել մեր ժողովուրդին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 2 Նոյեմբերի
Ցամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽՋ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/121

ՍԻՐԵՑԵԱԼ ԴՍՏԵՐ ՄԵՐՈՅ ԵՒ ՀԱՐԱՋԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ *ՕՐԻՈՐԴ ԱՐՄԻՆԷ ՔԷՈՇԿԷՐԵԱՆԻ* ՈՐ Ի ՄՈՆԹՐԷԱԼ, Ի ԳԱՆԱՏԱ

Սրտի խոր գոհունակութեամբ տեղեկացանք Գանատայի Հայոց Թեմի Բարեխնամ Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Ցովնան Արքեպս. Տէրտէրեանէն Ձեր բազում տարիներու անխոնջ և բազմարդիւն սպասաւորութեան մասին հայ դպրութեան, հայագիտական ուսմանց և մեր Առաքելական Ս. Եկեղեցւոյ Գանատայի Թեմին:

Անձամբ քաջատեղեակ ենք այն բեղմնալից գործունէութեան զոր յառաջ տարիք Հայաստանի մայր հողին վրայ, որպէս նուիրեալ, հաւատաւոր և հմուտ գիտնական Ձեր լայն բաժինը բերելով հայ մատենագրութեան այնքան հարուստ ժառանգութեան ուսումնասիրութեան և լուսաբանման ու ծանօթացման մարզերուն մէջ: Ձեր գիտական հրատարակութիւնները պերճախօս վկան են Ձեր գիտնականի բարձր կարողութեան և հայրենասիրական նուիրաբերման:

Վերջին տարիներուն Դուք Ձեր թանկագին ծառայութիւնը մատուցիք, և կը շարունակէք մատուցել, մեր ժողովուրդին՝ գլխաւորապէս Հայց. Եկեղեցւոյ, յատկապէս Գանատայի Հայոց Առաջնորդարանի միջոցաւ թէ՛ որպէս դիւանապետ և թէ՛ որպէս հրատարակութեանց բաժնի վարիչ:

Ի գնահատութիւն Ձեր բազմամեայ պտղառատ ծառայութեանց՝ այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

Ս·ՍԱՀԱԿ-Ս·ՄԵՍՐՈՊ շքանշանը:

Ի խորոց սրտի կ'աղօթենք առ Ամենակալն Աստուած որ Ձեզի պարգևէ քաջառողջ կեանք, որպէսզի երկար տարիներ շարունակ Դուք բերէք Ձեր լիառատ սպասը մեր դպրութեան և մեր Ս. Եկեղեցիին, նոր և յարաճուն իրագործումներով:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 25 Դեկտեմբերի
Ցամի Տեառն 1997 և ի թուին Հայոց ՌՆԽԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/126

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԱՌ *ՄԵԾԱՐԳՈՅ ՍՈՒՐԷՆ ԱՄԻՐԽԱՆԵԱՆ* ՈՐ Ի ԴՐԻՄ, ՅՈՒԿՐԱԻՆԱ

Սրտի խոր գոհունակութեամբ իմացանք Ուկրաինայի Հայոց Բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Նաթան Եպիսկոպոս Յովհաննէսեանէն Ձեր ազգասէր և եկեղեցաշէն ոգին և բազմօգուտ ծառայութեանց մասին:

Դուք վերջերս Ձեր սիրայօժար և առատաձեռն բաժինը բերիք յատկապէս Սիմֆերոպոլ քաղաքի մէջ ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ եկեղեցւոյ կառուցման աստուածահաճոյ գործին մէջ:

Ի գնահատութիւն Ձեր ամբողջանուէր և բարերարական նուիրաբերութեանց՝ Ձեզի կը շնորհենք Մեր այս

ՀԱՅՐԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԿՈՆԴԱԿԸ:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ կ'աղօթենք առ Ամենաբարին Աստուած որ բազմապատիկ վարձահատոյց ըլլայ Ձեր զոհողութեանց և Ձեզի շնորհէ բարիքները քաջառողջ կեանքի, գործի յարաճուն յաջողութեան և անսպառ երջանկութեան:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Օրհնութեան Կոնդակս
ի 8 Դեկտեմբերի 1997
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/90

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԱՌ *ՄԵԾԱՐԳՈՅ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՄԱՏՈՒՆԻ* ՈՐ Ի ՂՐԻՄ, ՅՈՒԿՐԱԻՆԱ

Սրտի խոր գոհունակութեամբ իմացանք Ուկրաինայի Հայոց Բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Նաթան Եպիսկոպոս Յովհաննէսեանէն Ձեր ազգասէր և եկեղեցաշէն ոգիին և օգտաշատ ծառայութեանց մասին:

Դուք վերջերս Ձեր սիրայօժար և առատաձեռն բաժինը բերիք յատկապէս Սիմֆերոպոլ քաղաքի ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ եկեղեցւոյ կառուցման աստուածահաճոյ գործին մէջ:

Ի գնահատութիւն Ձեր սրտանուէր և բարերարական նուիրաբերութեանց՝ Ձեզի կը շնորհենք Մեր այս

ՀԱՅՐԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԿՈՆԴԱԿ:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ կ'աղօթենք առ Ամենաբարին Աստուած որ բազմապատիկ վարձահատոյց ըլլայ Ձեր գոհողութեանց և Ձեզի շնորհէ բարիքները քաջառողջ կեանքի, գործի յարաճուն յաջողութեան և անսպառ երջանկութեան:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Օրհնութեան Կոնդակս
ի 8 Դեկտեմբերի 1997
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/89

ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱՋԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ *ՏԵԱՌՆ ԱՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԻՐՎԱՆԵԱՆԻՆ* ՈՐ Ի ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՕ, Ի ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Սրտի խոր գոհունակութեամբ տեղեկացանք Ամերիկահայոց Արեւմտեան Թեմի Բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Վահէ Արքեպիսկոպոս Ցովսէփեանէն և Սան Ֆրանսիսկոյի Ս. Ցովհաննէս եկեղեցւոյ Հոգաբարձութենէն, որ այս տարի կը բոլորէք Ձեր քահանայական ձեռնադրութեան 40-ամեակը:

Ի Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն կ'ողջունենք Ձեր Սիրելութիւնը Ձեր հոգևորական ծառայութեան այս բեղմնալից հանգրուանին:

Գաջատեղեակ ենք այն նուիրումին զոր ցուցաբերեցիք Ձեր եկեղեցական ծառայութեան ամբողջ ընթացքին Երուսաղէմի Պատրիարքութեան Սրբոց Յակոբեանց վանքէն մինչև Ամման, Անգլիա, Ֆրանսա, Լոս Անճելոս, Ս. Էջմիածին, Գանատա, Հնդկաստան և Սան Ֆրանսիսկո:

Ամէն տեղ Դուք ցուցաբերեցիք Հայց. Եկեղեցւոյ հանդէպ նախանձախնդրութեան և անձնանուիրումի ոգի թէ՛ վարչական-կազմակերպական, թէ՛ կրթական-դաստիարակչական, թէ՛ միջ-եկեղեցական և թէ՛ հոգևոր քարոզութեան մարզերուն մէջ:

Ի գնահատութիւն Ձեր բազմամեայ և արդիւնաշատ սպասաւորութեան Ձեզի կը շնորհենք այս

ՀԱՅՐԱԿԱՆ ՕՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԳԻՐՔ:

Կ'աղօթենք առ Ամենակալն Աստուած որ Ձեզի պարգևէ երկար տարիներ առողջութեան և առոյգ գործունէութեան բարիքներով օժտուած, որպէսզի առաւել ևս ծաղկեցնէք Ձեր նուիրաբերումը մեր Ս. Եկեղեցիին և առաւել ևս պտղաբեր դառնայ Ձեր սպասը Տիրոջ այգիին մէջ «ընդ միոյ երեսուն, ընդ միոյ վաթսուն և ընդ միոյ հարիւր», ըստ Աւետարանական խօսքին (ՄԱՐԿ. Դ. 20):

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Օրհնութեան Գիրս
ի 4 Նոյեմբերի 1997
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/84

ԳԻՐ ՀԱՅՐԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ
ԹԷՔԷԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ՈՐ Ի ՊԷՅՐՈՒԹ, ԼԻԲԱՆԱՆ

Սրտի խոր գոհունակութեամբ իմացանք Թէքէեան Մշակութային Միութեանդ Վարչութեան նամակէն, որ յառաջիկայ Դեկտեմբերի 14-ին Պէյրութի մէջ արժանավայել և եզրափակիչ հանդիսութեամբ պիտի նշուի Թէքէեան Մշակութային Միութեան Ոսկեայ Յոբելեանը, արդար հպարտութեամբ և արժանատրապէս պանծացնելու համար յիսնամեայ բազմաբեղուն գործունէութիւնը ի սպաս հայ դպրութեան և մշակոյթին:

Մենք անձամբ քաջատեղեակ ենք այն նուիրեալ, հեսւնողական և յոգնաջան աշխատանքներուն, որոնք իրագործուեցան Թէքէեան Մշակութային Միութեան կողմէ անցնող կէս դարուն, բազում երկիրներու մէջ հայ գիրի ու գրականութեան, հայ արուեստի և մշակոյթի այլազան բնագաւառներուն մէջ:

Մենք կը հաւատանք որ մեծատաղանդ բանաստեղծ Վահան Թէքէեանի հոգին երկինքի մէջ կը հրճուի ի տես Ձեր հաւատարմութեան հայ հոգիին ճառագայթումն եղող հայ մշակոյթին:

Մեր հայրական մաղթանքը և Հայրապետական յորդորն է որ Ոսկեայ Յոբելեանի այս պատուաբեր և հրճուալից առիթով Թէքէեան Մշակութային Միութեան բոլոր պատասխանատուները և անդամները նոր ոյժով ու կորովով և միացեալ ջանքերով լիցքաւորուին, որպէսզի առաւել և յարաճուն պտղաբերութեամբ լիցքատրեն Միութեան նուիրական առաքելութիւնը և առաւել նուիրաբերմամբ արժեցնեն գալիք տարիները, յատկապէս մեր երիտասարդ սերունդին մէջ: Որովհետև մեր մշակոյթը մեր ինքնութեան և արժանիքներուն սնուցիչ աղբիւրն է և հարազատ ու մաքուր հայելին և միանգամայն գրականը մեր ազգային տոկունութեան:

Բի՛ւր օրհնութիւն Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն, մեր Առաքելական Ս. Եկեղեցւոյ Հոգևոր Կեդրոնէն, որուն սէրը և նախանձախնդրութիւնը միշտ վառ է մնացած Թէքէեան Մշակութային Միութեան մէջ, յիսնամեայ գործունէութեան ընթացքին, որովհետև դուք հաւատացած էք Ձեր Միութեան անուանակոչումի երախտարժան բանաստեղծին մշտահունչ և ճշմարտաբարբառ խօսքին՝

«Եկեղեցին Հայկական՝ ծննդավայրն է հոգւոյս...»:

Մնանք միշտ հաղորդ և հաւատարիմ այդ ծննդավայրին և անոր մայր օճախին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

Թող մեծապայծառ զօրութեամբ ճառագայթէ Թէքէեան Մշակութային Միութիւնը համայն հայութեան կեանքին մէջ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնշ. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Օրհնութեան Գիրս
ի 26 Նոյեմբեր 1997
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/85

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԱՌ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ Ս. ԴԱՒԻԹ ԵԿԵՂԵՑԻՒՆ ՈՐ Ի ՊՈՔԱ ՌԱԹՈՆ, ՖԼՈՐԻՏԱ, Ի ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Հոգեպէս հրճուեցանք իմանալով Ամերիկահայոց Արևելեան Թեմի Բարեխնամ Առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ Արքեպ. Պարսամեանէն, որ յառաջիկայ տարի, Մարտ 29-ին յատուկ հանդիսաւորութեամբ և առ Աստուած փառատրութեան զգացումով պիտի նշէք Ձեր Ս. եկեղեցւոյ օծման և Մարտիկեան Հանդիսասրահի բացման տասներորդ տարեդարձը:

Մենք քաղցրութեամբ և վառ կենդանութեամբ կը յիշենք այն երջանիկ օրը երբ Մեր անդրանիկ հովուապետական այցելութեան ընթացքին, 1996-ի փետրուարին գտնուեցանք ձեր մէջ, աղօթակից դարձանք հազարաւոր հաւատացեալներու հետ Ս. Դաւիթ եկեղեցւոյ մէջ և Մեր հայրական խօսքը ուղղեցինք Մեր սիրեցեալ զաւակներուն:

Ուրախութեամբ իմացանք Առաջնորդ Խաժակ Սրբազանէն որ Ձեր հոգևոր հովիւին՝ Տ. Զաւէն Աւագ քհնյ. Արզումանեանին շուրջ բոլորուած՝ Հոգաբարձութիւն և համայնքային յարակից միութիւններ ու հաւատացեալ ծխականներ կենսունակ և գործօն ընթացքի մէջ կը պահէք եկեղեցական, հոգևոր, ազգային և կրթական կեանքը Պոքա Ռաթոնի հայ համայնքին:

Մեր հայրական աղօթքն է ու մաղթանքը և Մեր Հայրապետական յորդորը ձեր բոլորին որ տասնամեակը դարձնէք նոր ոգևորութեան առիթի և մղիչ ոյժի, որպէսզի առաւել և յարաճուն պտղաբերութեամբ ծաղկի Քրիստոսի հայկեան այգին՝ Հայց. Առաքելական Ս. Եկեղեցին Պոքա Ռաթոնի և ամբողջ Ֆլորիտայի նահանգին մէջ: Գործածելով Ս. Պօղոս Առաքեալի խօսքը կ'ըսէնք ձեզի. *«Հոգւով եռացէք»*:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Օրհնութեան Գիրս
ի 28 Նոյեմբերի 1997
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/86

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԱՌ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՈՐ Ի ՊԷՅՍԱՅՏ, ՆԻՒ ԵՈՐՔ, Ի ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Մեզի համար խոր հաճոյք պատճառեց իմանալ Ամերիկահայոց Արևելեան Թեմի Բարեխնամ Առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ Արքեպս. Պարսամեանէն, որ Պէյսայտի (Նիւ Եորք) Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ Շաբաթօրեայ Հայ Դպրոցը արդար հպարտութեամբ և արժանավայել շուքով պիտի նշէ իր հիմնադրութեան քառասնամեակը:

Այստեղ, Մայր Աթոռոյս՝ Ս. Էջմիածնի մէջ, Մենք փառք կուտանք Ամենակալին Աստուծոյ, որ անցնող քառասուն տարիներու ընթացքին Ձեզի և Դպրոցի Տնօրէնութեան, Ուսուցչական Կազմերուն և աշակերտութեան շնորհեց երախտաբեր գործերու բեղուն շրջան մը ի ծառայութիւն Ս. Մեսրոպ Մաշտոցի այգւոյն՝ հայ լեզուի և հայեցի դաստիարակութեան նուիրական առաքելութեան մէջ: Պատի՛ւ բոլոր վաստակողացդ և սպասաւորացդ հայոց դպրութեան, մանաւանդ այն դժուարին պայմաններուն մէջ, որոնց դէմ յանդիման կը գտնուիք Ամերիկայի ընկերային և մշակութային կեանքի լայնակուլ շրջագծէն ներս:

Վստահ ենք, որ բոլոր այն մանուկներն ու պատանիները որոնք անցան Ձեր դպրոցի հոգեմտաւոր ու ազգային-հայկական մթնոլորտին մէջէն՝ երախտագէտ պիտի զգան իրենք զիրենք և լիովին պիտի բերեն իրենց մասնակցութիւնը հայ լեզուի և առհասարակ հայապահպանութեան այնքան կենսական գործին:

Մեր հայրական աղօթքն ու մաղթանքն է և մեր Հայրապետական յորդորը, որ շարունակէք Ձեր առաքելութիւնը վերանորոգեալ ոյժով նոր կորով քաղելով յիսնամեակի պատուաբեր վաստակէն, նորանոր ու առաւել բեղուն ծառայութիւններ մատուցելու համար հայ մատղաշ սերունդին:

Թող Աստուծոյ ամենախնամ Աջը հովանի և պահապան ըլլայ Ձեր և Ձեր հովանաւորութեան տակ գործող Հայ Դպրոցի բոլոր պատասխանատուներուն և աշակիցներուն, ծնողներուն և աշակերտներուն և բոլոր նուիրատու ազնիւ անձերուն:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ, ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Օրհնութեան Գիրս
ի 28 Նոյեմբերի 1997
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/87

ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՑ ՄԵՐՈՑ ԵՒ ՀԱՐԱՉԱՏԻՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ *ՀԱՒԱՏԱՑԵԼՈՅ Ս. ԵՐԲՈՐԴՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑՒՈՅ* ՈՐ Ի ԹՈՐՈՆԹՕ, Ի ԳԱՆԱՏԱ

Սրտի խոր գոհունակութեամբ տեղեկացանք Գանատայի Հայոց Թեմի Բարեխնամ Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Ցովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանէն, որ կը պատրաստուիք նշելու Ձեր Ս. Եկեղեցւոյ կառուցման տասնամեակը:

Մենք անչնչելի յուշերով կը վերապատկերացնենք այն օրը երբ Մեր անդրանիկ հովուապետական այցելութեան ընթացքին Ս. Պատարագ մատուցինք, աղօթակից դարձանք ձեզ հետ և Մեր Հայրապետական սրտաբուխ պատգամը ուղղեցինք ձեզի:

Անցնող տասը տարիներու ընթացքին շքեղօրէն կառուցուած ձեր եկեղեցին եղաւ հոգևոր սնունդի առատահոս աղբիւր ձեր բոլորի համար: Այնտեղ ստացաք Ս. Հաղորդութիւն. այնտեղ լսեցիք Աստուծոյ խօսքը Աւետարանի քարոզչութեամբ. այնտեղ կատարուեցան Եկեղեցւոյ խորհուրդները, որոնցմով ընկալեցիք Աստուծոյ շնորհները: Ան եղաւ նաև ձեր բոլորի համար ազգային տուն, հայ ժողովուրդի զաւակներուդ համախմբման և միասնական գործունէութեան օճախ:

Տասնամեակի այս պատուաբեր առիթով կ'օրհնենք յիշատակը բոլոր վաստակողներուն, որոնք այժմ երկինքէն հոգւոյ աչքերով կը դիտեն ձեզ:

Բարձրօրէն կը գնահատենք ապրողներուդ և գործողներուդ նուիրեալ աշխատանքը, որ բնական արտայայտութիւնն է ձեր սիրոյն և կապուածութեան մեր մայրենի Ս. Եկեղեցւոյ, ընդ հովանեաւ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան որ ի Ս. Էջմիածին:

Մեր հայրական գնահատանքի խօսքը յատկապէս ձեր ծրաջան Թեմակալ Առաջնորդ Սրբազանին, ձեր տքնաջան Հոգևոր Հովիւին՝ Տ. Զարեհ քահանայ Զարգարեանին, որ անձնուիրաբար կը խնամէ իրեն յանձնուած բանաւոր հայկեան հօտը Քրիստոսի որ ի Թորոնթօ: Մեր Հայրապետական օրհնութիւնը և անսահման քաջալերանքը Հոգաբարձութեան և անոր շուրջ գործող բոլոր համայնքային կազմակերպութեանց, արանց և կանանց, ծերոց և տղայոց, մեծաց և փոքունց:

Թող տասնամեակը դառնայ իսկական վերանորոգութեան մղիչ ոյժ: Արթնցէք աշխարհի պարտադրած թմբիրէն և աշխարհիկ ոգիէն ծնած անտարբերութեան փորձութենէն. գիտցէք յարգը ձեր սուրբ եկեղեցիին. լծուեցէք եռանդուն գործի: Ինչպէս կ'ըսէ Ս. Պօղոս Առաքեալ «*Հոգւով եռացէք*»: Ձեր կենսունակութիւնը, աշխուժութիւնը, գործը պիտի ըլլան ձեր փառքը և պիտի կազմեն ձեր երջանկութեան աղբիւրը:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալք շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Օրհնութեան Գիրս
ի 28 Նոյեմբերի 1997
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/88

ՍԻՐԵՑԵԱԼ ՁԱՒԱԿԱՑՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ՀԱՅՈՑ ԵՒ ՀԱՐԱՁԱՏԻՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՈՐ Ի ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՒ Ի ԳԱՆԱՏԱ

Գոհաբանական աղօթիք և բերկրալից սրտի այսու Հայրապետական Կոնդակաւ կ՚ողջունենք Ամերիկահայոց Թեմի հաստատման հարիւրամեակը, որ շքեղ հանդիսաւորութեամբ պիտի նշուի Միացեալ Նահանգներու և Գանատայի մեր հաւատացեալ ժողովուրդի կեանքին մէջ 1998 տարւոյն ընթացքին:

Ահա լրի մէկ դար անցաւ այն օրէն ասդին, երբ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ ամենէն ազնուական և ժողովրդապատիւ դէմքերէն և 125-րդ Ամենայն Հայոց Կաթողիկոս Խրիմեան Հայրիկ իմաստութիւնը ունեցաւ իր սրբագիր ու սրտագիր, յուզիչ և յանկուցիչ Կոնդակաւ Նոր Աշխարհ (ի Միացեալ Նահանգներ) գալթած Իր զաւակներուն հոգևոր, ազգային-եկեղեցական խնամքին համար եկեղեցական ուրոյն թեմ հաստատել Ամերիկեան օրինեալ հողի վրայ:

Տարիները սահեցան: Չարքաշ աշխատաւորի արդար վաստակով և առատ քրտինքով հայ ժողովուրդի զաւակները իրենց եկեղեցիին ու ազգին պատիւ բերող կեանքով գաղթականի հոգեբանութիւնը վերածեցին լիիրաւ ու պատուաբեր քաղաքացիի կերպարի: Ժողովուրդի տնտեսական կեանքը կերպարանափոխուեցաւ. գործարանի պարզ աշխատաւորը դարձաւ գործատէր, շինարար, վաճառական, համալսարանական, գիտնական, մտաւորական, արուեստագէտ, պետական դէմք: Ամերիկայի Միացեալ Նահանգներու ընձեռած ազատ ասպարէզի և նախաձեռնութեան լայն կարելիութիւնները ամբողջական ձևով արժևորուեցան մեր ժողովուրդի զաւակներուն կողմէ:

Հայոց Եկեղեցին եղաւ հոգևոր սնունդի աղբիւր և ազգային ինքնութեան դարբնոց: Խրիմեան Հայրիկի տեսիլքը մարմին առաւ և դարձաւ ներշնչման աղբիւր: Եկեղեցւոյ կեանքը, Ուստրի և Նիւ Եորքի ու Ֆրեզնոյի համեստ պայմաններէն դուրս տարածուելով մեծապէս աճեցաւ, ծխական եկեղեցիները բազմացան. հոգևորականներու թիւը բազմապատկուեցաւ, Միացեալ Նահանգներու Արևմտեան շրջանի (Գալիֆորնիոյ) և Գանատայի մէջ նոր թեմեր հաստատուեցան: Եկեղեցւոյ հարիւրամեայ վաստակը բացառիկ և օրինակելի նուաճումներու յարաճուն վերելք մը եղաւ, և՝ կը շարունակէ ըլլալ առաւել պտղաբերմամբ:

Ցարգա՛նք բոլոր վաստակաւորներուն և այժմ ի Տէր հանգեալ անձանց, հոգևորական թէ աշխարհական, այր թէ կին, մեծ ու փոքր: Պատի՛ւ ձեզի՝ այժմեան ապրողացդ և գործողացդ, հոգևորական թէ աշխարհական, որոնք բոլորուած ձեր Թեմական Առաջնորդներուն շուրջ՝ Գերաշնորհ Տ. Խաժակ Արքեպս. Պարսամեանի (Արևելեան Թեմ), Գերաշնորհ Տ. Վաչէ Արքեպս. Յովսէփեանի (Արևմտեան Թեմ) և Գերաշնորհ Տ. Յովնան Արքեպս. Տէրտէրեանի (Գանատայի Թեմ), օրէ օր առաւել ևս կը ճոխացնէք ձեր աստուածահաճոյ և ազգաշէն գործը ի սպաս Քրիստոսի հաւատքին զօրացման, Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ աւանդութեան կենդանի պահպանութեամբ, ընդ օրհնութեամբ և ընդ հովանեաւ Հայց. Եկեղեցւոյ Մայր Աթոռին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան որ ի Ս. Էջմիածին:

Բնականօրէն կ'անդրադառնանք որ բոլոր այս լուսապայծառ կողմերուն կողքին, թեմական, վարչական բաժանման վէրքը դեռ կը տառապեցնէ Ամերիկահայ մեր ժողովուրդի զաւակները: Մեր սրտեռանդ աղօթքն է, հայրական ամենաջերմ մաղթանքը և յարատև ջանքը որ հարիւրամեակի բարեբաստիկ առիթով, քրիստոնէական պատմութեան երկրորդ հազարամեակին և Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ պաշտօնական հիմնադրութեան 1700 սեմին ի սպառ դարմանուի այդ վէրքը և Խրիմեան Հայրիկի հիմնադրած Թեմը մնայ մէկ Թեմ, ինչ որ ապահովաբար բարիքներու նոր հոսանք մը պիտի ծաւալէ մեր ողջ Ամերիկահայ ժողովուրդի կեանքին համար ու պատիւ պիտի բերէ մեր Ս. Եկեղեցիին և ազգին, ողջ Ամերիկայի տարածքին:

Սիրելի՛ք,

Նոր պայմաններու տակ կ'ապրի համայն հայութիւնը, և մանաւանդ մեր Մայր Հայրենիքը՝ Հայաստանը, իր ազատ ու անկախ Հանրապետութեամբ, ուր Մայր Աթոռ Ս. Էջմիածինը կոչուած է վերստին դաղնալու բաբախող սիրտը մեր Ս. Եկեղեցիին իր բոլոր զաւակներուն համար, առանց խտրութեան, ի Հայաստան, յԱրցախ և ի սփիւռս աշխարհի: Գիտնանք նորոգուիլ, պատրաստ և քաջ ըլլանք փոխուելու հոգիով և միտքով ու մեր կեանքը ապրելու միութեան հրամայականով որ գերագոյն հրամայականն է մանաւանդ այս մեծ ու աստուածապարգև յեղափոխութեան շրջանին, որ նոր ու լուսալից շրջան բացաւ հայոց դարաւոր պատմութեան մէջ:

Թեմի հիմնադրութեան հարիւրամեակի այս ցնծալից և իմաստալից առիթով, Մեր սպասումն է որ նո՛ր գիտակցութեամբ, առաւել պատրաստակամ յանձնառութեամբ և կրկնապատկեալ նուիրմամբ կապուիք մեր Ս. Եկեղեցիին և շէնցնէք մեր Եկեղեցւոյ կեանքը՝ մեր Հիւսիսային Ամերիկայի ցամաքամասի տարածքին, ի սպաս Աստուծոյ և մեր պատուական ազգին:

Հարիւրամեակի այս երջանկալից առիթով, Մեր անհուն գնահատանքի խօսքը կ'ուղղենք Միացեալ Նահանգներու և Գանատայի պետական և եկեղեցական իշխանութեանց, որոնք սէր ու յարգանք կ'ընծայեն ձեզի ձեր հաւատարիմ ու աշխարհաշէն կեանքին ու գործին համար:

Փա՜ռք և գոհութիւն Ամենակալին Աստուծոյ որ հարիւր տարիներու ընթացքին Իր երկնային շնորհը առատօրէն բաշխեց մեր ժողովուրդին: Աստուած ընդ մեզ եղաւ և միշտ է: Մենք ալ պարտաւոր ենք ըլլալ Իրեն հետ, Իր կամքին ընդառաջ և Իր շնորհին արժանի և ընդունակ: Կը յիշեցնենք Ս. Պօղոս Առաքեալի խօսքը. «Հոգւով եռացէ՛ք. Տեառն ծառայեցէ՛ք. յուսով խնդացէ՛ք. նեղութեան համբերեցէ՛ք. աղօթից ստէպ կացէ՛ք» (ՀՌՈՄ. ԺԲ. 11):

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 4 Դեկտեմբերի
Ճառի Տեառն 1997 Լ ի թուին Հայոց ՌՆԽՋ
Մայրապետական Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/122

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԱՌ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆ ՊՐԱԶԻԼԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ ՈՐ Ի ՍԱՆ ՓԱՒԼՈ, Ի ՊՐԱԶԻԼ

Հոգեկան խոր ուրախութեամբ տեղեկացանք Գերշ. Տ. Տաթև Արքեպս. Ղարիպեանէն որ յառաջիկայ տարի 1998-ին հանդիսաւորապէս և մեծաշուք տարողութեամբ պիտի նշէ Սան Փաւլոյի Հայց. Առաքելական Ս. Գէորգ Մայր եկեղեցւոյ յիսնամեակը:

Մենք քաղցրութեամբ և հոգևոր ցնծութեամբ կը յիշենք այն հոգեվից պահը, որ անցուցինք Մայր եկեղեցւոյդ կամարներուն ներքև երբ անցեալ տարի, 1996-ի Օգոստոսին, Մեր անդրանիկ Հովուապետական այցելութիւնը տուինք Ձեր տիրախնամ Թեմին:

Կրնանք երևակայել թէ անցնող կէս դարու ընթացքին հոգևոր ու ազգային բարիքներու որքա՜ն առատահոս աղբիւր մը եղաւ Ս. Գէորգ Մայր եկեղեցին բազմահազար հայ հաւատացեալներու համար: Այնտեղ անոնք ապրեցան Աստուծոյ ներկայութիւնը իրենց հոգիներուն մէջ, քրիստոնէական սուրբ հաւատքին և մեր եկեղեցւոյ սրբազան աւանդութեան մէջէն: Այնտեղ լսեցին Աստուծոյ խօսքը: Այնտեղ ստացան Աստուծոյ շնորհները մեր եկեղեցւոյ սուրբ խորհուրդներու մատակարարմամբ: Հոգևոր հարազատ տուն եղաւ ան ձեր բոլորին համար անխտիր: Ձեզ համար եղաւ ձեր հոգևոր ու ազգային միութեան և պատկանելիութեան զգացումներուն վառ օճախը:

Յիսնամեայ այս ոսկեայ հանդրուանին, սրտի պարտք կը զգանք յատուկ գոհաբանական աղօթք մատուցել առ Աստուած եկեղեցւոյդ բարերարին՝ հանգուցեալ ԺՈՐԺ ՐԸԶԳԱԼԼԱՀ ԹԱՀԱՆԻ համար: Մեր բոլորի հոգևոր այս կեդրոնին ու սրբատեղիին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ հոգեհանգիստ պիտի կատարենք իր հոգւոյ երանական խաղաղութեան համար: Կ'աղօթենք որ Աստուած իր ընտանիքի անդամներուն շնորհէ երջանկալից երկար կեանք: Թող Աստուած նորանոր բարերարներ յարուցանէ մեր ազգին մէջէն մեր Ս. Եկեղեցւոյ, ազգին, մշակոյթին և Մայր Հայրենիքին պայծառութեան համար:

Մեր աղօթքն է որ Յիսնամեակը դառնայ նոր մղիչ ոյժ՝ ձեր հաւատքը, ուշքն ու գործը կեդրոնացնելու ներկայի՛ն և ապագայի՛ն վրայ: Անցեալը յարգելու, անցեալով հպարտանալու լաւագոյն եղանակը՝ ներկան ծաղկեցնելն է: Թող պարտաւորութեան գիտակցութիւնը, պատասխանատուութիւն ստանձնելու պատրաստակամութիւնը, ձեր աշխոյժ մասնակցութեամբ այսօրուան կեանքը պտղաբեր դարձնելու նախանձախնդրութիւնը աճին և զօրանան ձեր բոլորի մէջ, յատկապէս երիտասարդ սերունդին մէջ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ, ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Օրհնութեան Գիրս
ի 23 Դեկտեմբերի 1997
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/91

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԱՌ ԱԶԳԱՅԻՆ ԴՈՒՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ ՈՐ Ի ՍԱՆ ՓԱՒԼՈ, Ի ՊՐԱԶԻԼ

Սրտի խոր գոհունակութեամբ տեղեկացանք Պրազիլիոյ Հայոց Թեմի Բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Տաթև Արքեպս. Ղարիպեանէն, որ յառաջիկայ տարի, 1998-ին, Սան Փաւլոյի մէջ արժանավայել շուքով պիտի նշուի ԱԶԳԱՅԻՆ ԴՈՒՐԵԱՆ վարժարանին հիմնադրութեան եօթանասնամեակը:

Որքա՜ն մեծ ուրախութիւն է Մեզ համար ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին, անդրադառնալ որ առաւասիկ 1928 թուականէն ասդին վարժարանդ կը շարունակէ իր ազգաշէն գործունէութիւնը, հայ մարդու առողջ պատրաստութեան նուիրական գործը հեռաւոր Պրազիլիոյ մէջ մեր տիրախնամ Թեմի կեդրոնական Վսարչութեան հովանիին տակ:

Լուսահոգի Եղիշէ Դուրեան Պատրիարքի, մեծ հոգևորականին և տաղանդաւոր գրագէտին ու բազմավաստակ գիտնականին անունը կրող կրթական հաստատութիւնը եղաւ դարբնոց հայ նոր սերունդի կազմաւորման: Պրազիլիոյ պետական կրթական ծրագիրներուն կողքին վարժարանը գիտցաւ կենդանի պահել հայոց լեզուն և պատմութիւնն ու մշակոյթը Պրազիլահայ նոր սերունդի կեանքին մէջ: Ապրի՛ք, հազար ապրիք:

Բայց 70-ամեակը միայն անցեալին մատուցուած յարգանքի առիթ մը չէ: Անցեալը պատմութեան կը պատկանի: Այս առիթը, անցեալի փորձառութենէն քաղուած ներշնչումի առիթ մըն է ներկան ծաղկեցնելու և ապագան աւելի պայծառ ընծայելու համար: Եթէ ձեր հայրերը գիտցան կառուցել և 70 տարի պահել, հակառակ իրենց տնտեսական նեղ պայմաններուն, որքա՜ն աւելի կրնաք դուք կատարել Ազգային Դուրեան վարժարանը շէն ու ծաղկուն և պտղաբեր դարձնելու նախանձախնդրութեամբ և գործնական զոհողութեամբ:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն կ'օրհնենք յիշատակը բոլոր նախորդ վաստակողներուն, որոնք այժմ երկինքի բնակիչ են եղած: Ոյժ, կորով, առաւել նուիրաբերում և նորանոր նուաճումներ կը մաղթենք ձեզի՝ երկրի վրայ ապրողներուդ և գործողներուդ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Օրհնութեան Գիրս
ի 23 Դեկտեմբերի 1997
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/92